№ 247 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 6 ՆՈՅԵՄԲԵՐԻ 1913 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 6 ՆՈՅԵՄԲԵՐԻ № 247

ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գի՛ն 10 րուբլի. կէս տարվանը
և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.
Տպարանի տելեֆոն № 67.

ԱՅՍՕՐ!!!

ԱՊՈԼԼՈ
6-ին, 7-ին, 8-ին և 9-ին
Նոյեմբերի 1913 թ.
Միայն 4 օրով
կը ներկայացվի խոշոր պատկեր

ՍՈՒՖՐԱԺԻՍՏՈՒՀԻ

Սիմֆիայի պիէս 5 գործ. ՈՒՐԲԱՆ ԳԱԴԻ Մասնակցութեամբ յայտնի արտիստուհի

ԱՍՏԱ ՆԻԼՍԷՆԻ

Այս պատկերը ձեռք բերելու համար խոշոր գումար ծախսելու պատճառով, տեղերի գները աւելացված են։

● Որովհետև ներկայ պատկերը շատ մեծ է ● և ներկայացումը շարունակվում է 1 ժամ ● 45 ր., այդ պատճառով տոմսակները կը ● ծախվեն միմիայն սէանսների սկզբին։

● I սէանսի սկիզբը երեկ. ժ. 5 և 30 րոպ.
● II » » » » 7 և 15 րոպ.
● III » » » » 9-ին —
● IV » » » » 10 և 45 րոպ.

● Լօժա՝ 5 տեղանոց—5 ռուբ. —
● Մի աթոռը (լօժա)—1 ր. 25 կ.
● I տեղը . . . 1 ր. —

ՏԵՂԵՐԻ ԳՆԵՐԸ

II տեղը . . . . . 80 կ.
III տեղը . . . . . 60 կ.
IV տեղը . . . . . 40 կ.

1002.

Այս ներկայացմանը մանկական, աշակերտական և զինւորական տոմսակներ ՉԵՆ ՏՐՎՈՒՄ։ Կոնտրամարկաները անպայման ԱՆՎԱՒԵՐ ԵՆ։ 1—1

ԱՅՍՕՐ!!!

ՆՈՐ ԲԱՑՎԱԾ Է

ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ, ԿԱՆԱՆՑ և ԵՐԵԽԱՆԵՐԻ պատրաստի

ՍՊԻՏԱԿԵՂԷՆԻ ԽԱՆՈՒԹ

Վ. Գ. ՄՕՆԱԽՕՎԻ

Երևանեան հրապար., Թամամշեանի պասաժ, «Կավկազ» հիւրանոցի դիմացը։ Տէլէֆօն 14—96.

ՆԱԽԿԻՆ ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐ

Ա/Տ. „Ա. Ս. ԳԱՒՐԻԼՕՎ ԵՒ ՈՐԴԻՔ" ՖԻՐՄԱՅԻ

Ստացված են մեծ քանակութեամբ ՊՐՕՖԵՍՕՐ Դ-ր ԵԳԷՐԻ ԲՐԴԷ ՍՊԻՏԱԿԵՂԷՆ,

ՓՈՂԿԱՊՆԵՐ ԿԱՇՆԷ ԿԱՆԱՆՑ ԳՈՒԼՊԱՆԵՐ
Նոյնպէս և՝ ՕՁԻՔՆԵՐ ԱՂԼՈՒԽՆԵՐ ՆՈՅՆԸ ԵՒ
1000. ՄԱՆԺԷՏՆԵՐ ԳՈՒԼՊԱՆԵՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ 1—1

Հայ Գրողների Կովկասեան Ընկերութեան Վարչութիւնը յայտնում է ի գիտութիւն ընկերութեան անդամների և յարգելի հայ հասարակութեան, որ 1) Վերսկսվում են Ընկերութեան մշտական գրական երեկոյթները։ Առաջին երեկոյթը նշանակված է նոյեմբերի 7-ին, հինգշաբթի, երեկոյեան 8 ժամին։ Կը դասախօսէ պ. Գ. Իփէկեանը. նիւթն է՝ «Թիւրքահայ գրականութիւնը»։ Երեկոյթները տեղի կունենան հինգշաբթի օրերը —Կովկ. Հայոց Բարեգ. Ընկ. դահլիճում։ 2) Ընկերութեան այն անդամները, որոնք կանոն. § 6-ի համաձայն մինչև այժմ չեն վճարել իրանց անդամավճարը՝ Ընկերութիւնից հեռացած են համարվում։ Նրանք կարող են նորից անդամ համարվել, եթէ վճարեն ապառիկ անդամավճարը։

Նորից անդամագրվողը իրաւունք ունի անվարձ յաճախել գրական երեկոյթներին։

(ա.օ.) տռ. 998. 2—1

„Նուէր Մանուկներին" Ընկ. հերթական **Ընդհանուր ժողովը** տեղի է ունենալու Կ. Հ. Բ. Ընկ. դահլիճում նոյեմբերի 10-ին, կիրակի, առաւօտեան ժամը $11^{1}/_{2}$-ին։

ՕՐԱԿԱՐԳՆ է՝ 1) 1914 թւի «ՀԱՍԿԵՐ» ամսագրի և այլ հրատարակութիւնների նախահաշւի, նաև գործունէութեան ծրագրի քննութիւնը։ 2) Վարչութեան 3 անդամի, 2 փոխ-անդամի և վերստուգիչ մասնաժողովի բոլոր անդամների ընտրութիւնը։

Ժողովը լինելով երկրորդ անգամը՝ կը կայանայ որքան անդամ էլ ներկայ լինի։

(շ.) տռ. 1003. 2—1

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ
(ԶՈՒԲԱԼՕՎԻ ԱՆՈՒԱՆ)

Հայոց Դրամ. Ընկ. խումբը
Այսօր, չորեքշաբթի, նոյեմբերի 6-ին
կը ներկայացնէ Ա. ԴԻՒՄԱՅԻ

ՔԻՆ

Դրամա 5 գործ.

Մասնակցում են.—տ. տ. Ադամեան, Արաքս, Արմէնեան-Դուրեան, Արուսեակ, Գուլազեան, Լիսի-Սեւումեան, պ. պ. Ալլահվերդեան, Արմէնեան, Յարութիւնեան, Բերոյեան, Մուրադեան, Օվի-Ահարոնեան, Փափազեան Վահրամ, Փիրումեան, Թաշճեան, Թառլանեան, Տէր-Առաքելեան և ուրիշներ։

Րէժիսոր՝ Ա. Արմէնեան
Սկիզբը երեկոյեան ժամը 8-ին։
Վարչութեան հերթապահ անդամ
Գ. ՍԱՐԵԱՆ
1001. 1—1

Բերլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

Վերադառնալով արտասահմանից վերանորոգեց ներքին հիւանդութիւնների ընդունելութիւնը. առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի. բժշկութիւն նաև խառն ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, արհեստական ՊՆԵՎՄՈԹՈՐԱՔՍՈՎ։ Թոքերի և սրտի քննութիւնը լուսաւորված ՌԵՆՏԳԵՆԵԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐՈՎ։ Ամեն օր՝ 9—1 ժամ ցեր. և 5—7 ժ. երեկոյեան. ՉՔԱՒՈՐՆԵՐԻՆ Եռ. Շ. 9—10 ՉՐԻ։ Бебутовская 23. тел. 7—92.

(ա.օ.) տռ. 977. 100—5

ՅԱՒԵՐԺ ՅԻՇԱՏԱԿ

ԱԼ. ՔԱԼԱՆԹԱՐ
ՍԻՄԷՕՆ ԶԱՒԱՐԵԱՆ
ԿՈՍՏ. ԽԱՏԻՍԵԱՆ

«ՏԱՐԱԶԻ» հոկտեմբերեան ՀՐԱՏԱՊ №-ը անթիւ պատկերներով և յօդուածներով։

ԳԻՆԸ 1 ՌՈՒԲԼԻ։

Վերադիր վճարով եւ ապառիկ պատուէր չէ ընդունվում։

ԴԻՄԵԼ՝ ТИФЛИСЪ, БЮРО ПЕЧАТИ. Головинскій пр. 41.

(օ. մ.) տռ. 31. 5-3

Առաջնակարգ ցիրկ
ԵՂԲ.
ԵՍԻԿՕՎՍԿԻՆԵՐԻ

Այսօր, չորեքշաբթի, նոյեմբերի 6-ին, տեղի կունենայ Կոստա Մայսուրաձէի բէնէֆիսը։ Բէնէֆիցիանտը կը կատարէ շատ №№—կոլոբէ և կը կոտրէ հաստ երկաթը, և այլ դժուարին գործողութիւններ։ Այսօր Մայսուրաձէն կըմբշամարտէ երկու հոգու հետ, այն է՝ Սէպնիկի և Սալի-Սուլէյմանի հետ։ Այնուհետև կըմբշամարտեն—Իվան Կայինը՝ Չէմբէրս Ցիպսի հետ, Զալէվսկին՝ Զաէբնի հետ, Մուխանուրան՝ Բէրնարդի հետ։ Տեղի կունենայ նաև կովկասեան ըմբշամարտ սիրողների միջև։

Մասնակցում է ամբողջ խումբը։ Ծաղրածուներ Տակսի և Չարփախեի առաջին դէբիւտը։

Ներկայացման սկիզբը ժամը 8-ին, ըմբշամարտի սկիզբը ժամը $9^{1}/_{2}$-ին, իսկ ներկայացման աւարտը ժամը 11-ին։

տռ. 999. 1—1

ՀԱՅՈՑ ՀԱՐՑԸ ԵՒ ԱՆԳԼԻԱՆ

Նորերս անգլիական մինիստր-նախագահ Ասկվիտը, ինչպէս հաղորդեցին հեռագիրները, Գիլդհոլում քաղաքական մի մեծ ճառ արտասանեց, որի մէջ, ի թիւս այլ միջազգային հարցերի, շօշափեց և հայկական հարցը։ Թէև դեռ հրատարակված չը կայ ճառը ամբողջովին և հեռագիրներն էլ շատ համառօտ կերպով տուին նրա բովանդակութիւնը, բայց «Н. Вр.» թերթը իր մի առաջնորդող յօդուածում, «Հայկական րէֆորմները և Անգլիան» վերնագրով,—որի թարգմանութիւնը կը տանք «Մշակի» մէջ—տալիս է մեզ Ասկվիտի՝ հայկական հարցի մասին խօսածի էութիւնը։

Ինչպէս գիտենք, վերջերս զանազան հակասական տեղեկութիւններ տպվեցին հայկական հարցի այժմեան վիճակի մասին։

Գիտէինք, որ Ռուսաստանը մշակել է րէֆորմների մի ծրագիր, որ յայտնի է «Մանդէլշտամի ծրագիր» անունով, բայց Գերմանիան հակառակ է այդ ծրագրին։ Ապա հաղորդվեց, որ Գերմանիայի և Ռուսաստանի միջև համաձայնութիւն է կայացել և ընդունվել է ռուսական ծրագիրը, բայց ենթարկված մի մի քանի կարևոր փոփոխութիւնների, այն է, որ ռուսական ծրագրով, ենթադրված մի ընդհանուր նահանգի կամ կուսակալութեան փոխարէն պէտք է լինեն երկու հայկական նահանգներ և ամեն մի նահանգը պէտք է ունենայ մի առանձին կուսակալ։ Գերմանիայի և Ռուսաստանի համաձայնութիւնը գրաւական էր, որ երեքպետեան դաշնակցութիւնը (Գերմանիա, Աւստրիա և Իտալիա) և երեքպետեան համաձայնութիւնը (Ռուսաստան, Անգլիա և Ֆրանսիա) համերաշխօրէն կը գործեն հայկական հարցի մէջ և րէֆորմների գործադրութիւնը Հայաստանում կը կատարվի այդ մեծ պետութիւնների կամ նրանցից լիազօրված մի պետութեան հսկողութեան ներքոյ։

Առանձին-առանձին այս կամ այն մեծ պետութեան հայեացքը մեզ՝ հայկական րէֆորմների իրագործման եղանակի մասին՝ յայտնի չէ. յայտնի է միայն այն, որ Բերլինի դաշնագրին ստորագրող վեց մեծ պետութիւնները եկել են որոշ համերաշխութեան և համաձայնութեան այդ մասին և որոշ առաջարկներ են ներկայացրել Թիւրքիային, զգացնել տալով նրան որ եւրոպական կոնտրօլ պէտք է լինի րէֆորմների գործադրութեան վրա։

Այդ համերաշխութեան հանդէպ Թիւրքիան աշխատում է ամէն կերպ համոզել մեծ պետութիւններին, որ հարկ չը կայ եւրոպական կոնտրօլի և ինքն արդէն լրջօրէն ձեռնարկել է րէֆորմներին։ Մի խօսքով, նա շռայլում է իր սովորական համիդեան ոսկեզօծ խոստումները։

Գործերը այդ դրութեան մէջ էին, երբ Ասկվիտը արտասանեց Գիլդհոլում իր քաղաքական մեծ ճառը։ Ապա յայտնվեց, որ հայկական պատուիրակութեան պետ Պօղոս փաշա Նուպար տեսակցութիւն և ունկնդրութիւն է ունեցել Պարիզում ռուսաց մինիստր-նախագահ Կոկովցեվի և արտաքին գործերի մինիստր Սազօնովի հետ։

Եւ ահա այժմ «Новое Время» թերթը, որ ռուսական արտաքին քաղաքականութեան գիտակն է, հաղորդում է Ասկվիտի հայեացքը հայկական հարցի մասին։

Իր ճառի մէջ Ասկվիտ հաստատել է մի քանի թէզիսներ, որոնց հետևել է Անգլիան այդ հարցի մէջ։ Անգլիան ողջունում է այն իրողութիւնը, որ վերջին պատերազմները չը շօշափեցին Թիւրքաց կառավարութեան շահերը Փոքր-Ասիայում և Թիւրքական վեհապետութիւնը ասիական երկրների մէջ մնաց անխախտելի։ Բրիտանական կառավարութիւնը ամէն կերպ պէտք է նպաստէ այդ վեհապետութեան պահպանութեան, բայց դրա հետ միասին նա կարծում է, որ ամենալաւ գրաւականը այժմ գոյութիւն ունեցող քաղաքական status quo-ի համար հանդիսանում են լայն ներքին րէֆորմները։ «Այդ րէֆորմները,—ասել է Ասկվիտը,—չեն կարող գործադրվել առանց մեծ պետութիւնների աջակցութեան»։ Մեծ-բրիտանական կառավարութիւնը ուրախ կը լինի ցոյց տալ Թիւրքիային իր խնդրած օգնութիւնը (Թիւրքաց կառավարութիւնը խնդրած է եղել անգլիական կառավարութեան՝ օգնել իրան գործադրել րէֆորմները անգլիական ագենտների ձեռքով), «բայց նա աչքից բաց չի թողնի միւս պետութիւնների շահերը»։

Իսկ Հայաստանում, ինչպէս յայտնի է, շահեր ունի Ռուսաստանը, Կիլիկիայում էլ Գերմանիան։

Այս ամենից պէտք է հետևցնել, որ եթէ Հայաստանում և Կիլիկիայում սկսեն մտցնել րէֆորմներ, նրանց գործադրութեան վրա պէտք է կոնտրօլ, հսկողութիւն ունենան Ռուսաստանը և Գերմանիան։

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

4 նոյեմբերի

Եալտա.—Զեկուցանելու համար Թագաւոր Կայսրին ներկայացաւ զինւորական մինիստրը։

—

Պարիզ.—Պրեզիդենտը ի պատիւ Մեծ Իշխան Նիկոլայ Միխայլօվիչի նախաճաշ տուեց։

—

Պարիզ.—Ստատս-սեկրետար Կոկովցեվը Ֆրանսիայի սահմաններից հեռագրով յանուն մինիստր-նախագահ Բարտուի անկեղծ երախտագիտութիւն յայտնեց ֆրանսիական կառավարութեան ցոյց տուած չափազանց սիրալիր ընդունելութեան համար։

—

Բերլին.—Եկաւ ստատս-սեկրետար Կոկովցեվը կնոջ հետ Դուրնովի և ֆինանսների մինիստրի քարտուղարի ուղեկցութեամբ։

Բոլոր լրագիրները արտատպել են Կոկովցեվի հասցէին «Նորդ-Դոյչէ-Ալգ. Յայտունգի» նուիրած յայտարարութիւնը։ Բացի դրանից լրագիրներից մի քանիսը անկախ տպել են ողջոյնի յօդուածներ։

Կոկովցեվը այցելեց րէյխս-կանցլէրին։

Ռուսաց դեսպանը ի պատիւ Կոկովցեվի ճաշ տուեց, որին ներկայ էին, բացի դեսպանատան պաշտօնեաներից, րէյխս-կանցլէրը կնոջ հետ, պետական ֆինանսների մինիստր Կիւնը, արտաքին գործերի մինիստրի օգնական Ցիմմերմանը, վարկային դիւանատան վերատեսուչ Դուրնովը։

—

Կ. Պօլիս.—Ռուսաց և անգլիական դեսպանների ներկայութեամբ մեծ վէզիրը և պարսից դեսպանը ստորագրեցին Թիւրքիան և Պարսկաստանը իրարից բաժանող սահմանագծի արձանագրութիւնը։ Ռուս, պարսիկ, անգլիացի և թիւրք պատգամաւորները մեկնում են Պարսկաստան «Օլգա» շոգենաւով, Բասրայի վրայով, սահմանը ճշգօրէն որոշելու համար։

Բ. Դրան շրջաններում մատնանշում են, որ մեծ վէզիրի և աւստրիական դեսպանի միջև զրոյցի առարկայ եղաւ Աւստրիային կոնցեսիա տալու հարցը, որպէսզի կառուցանէ Ալեանիայի և Սելեվկայի միջև ընկած Ալայա նաւահանգիստը։

—

Թէհրան.—Պարսից կառավարութիւնը ընդունեց այն պայմանները, որ մշակել են Կ. Պօլսում Ռուսաստանի և Անգլիայի ներկայացուցիչները թիւրք-պարսկական սահմանային հարցի առիթով։

—

Սոֆիա.—Տօնչևը իր ճառի մէջ յայտնեց, որ ժողովրդական դժբաղդութեան պատճառ Սերբիայի հետ կապված դաշնակցութիւնը եղաւ, որ սխալ էր իր հիմունքում։ Տօնչևը պարզեց կառավարութեան ծրագիրը, յայտնելով թէ կառավարութիւնը կապացուցանէ, որ Բուլգարիան հանդիսանում է կենսունակ ազգային մեծութիւն։ Տօնչևից յետոյ 3 ժամ խօսող Գենադիևը, թւելով բազմաթիւ փաստաթղթեր, պարզեց Բուլգարիային հասած—յաղթական պատերազմից յետոյ—անաջողութիւնների պատճառները, վերագրելով բոլոր սխալները բացառապէս բուլգարական դիպլօմատիային։ Ներկայ կառավարութիւնը, նրա ասելով, ընդունեց իշխանութիւնը այն ժամանակ, երբ ամեն ինչ վարկաբեկված էր, փրկեց մայրաքաղաքը թշնամիներից ներս խուժելուց և զօրքի պատիւը և պահեց այն, ինչ որ կարելի էր յաղթութիւնների պտուղներից։ Հռետորը իր ճառը աւարտեց, ասելով որ կառավարութիւնը յոյս է դնում ընտրողների վստահութեան վրա ժողովրդական հզօրութիւնը վերականգնելու համար։

—

Բելգրադ.—Թիւրքիայի հետ հաշտութիւն կնքելու համար կառավարութեան մշակած հրահանգները ուղարկվեցին Կ. Պօլսի սերբ պատգամաւորին։

Մոնաստիր մեկնեցին գահաժառանգը և մինիստր-նախագահը։

—

Աթէնք.—Պալատի նախագահ ընտրվեց կառավարութեան թեկնածու Զավլիտիանոսը։

Թագաւորը հանդիսաւոր ունկնդրութեան ընդունեց անգլիական ծովային պատգամաւորներին։

Լօնդոն.—Արքիդուքս Ֆրանց-Ֆերդինանդը օրն անցրեց քաղաքը դիտելով, այցելեց այրի Թագուհուն, երեկոյեան ճաշեց աւստրիական դեսպանատանը։

Մադրիդ.— Արտասահման մեկնեց թագաւորական զոյգը։

Մէկսիկա.—Դրութիւնը յուզալի է։ Ապստամբները շրջապատել են Օրիսաբուն։ Եթէ այդ քաղաքը անձնատուր լինի, այն դէպքում կը դադարի երկաթուղային կապը ափի հետ։

Հուէրտան յայտնեց ամերիկական հաւատարմատարին, որ չի հրաժարվի իր լիազօրութիւններից և կը լսէ միայն Մէկսիկայի արժանապատուութեանը համապատասխան առաջարկութեան։ Մինիստրներին նա յայտնեց, որ սկսած կռիւը կը շարունակէ մինչև վերջ։

Փարիզ.—Պատգամաւորների պալատում ընտրողական բարենորոգման մասին սկսած վիճաբանութիւնների ժամանակ կառավարութիւնը և մասնաժողովն առաջարկեցին որոշել շրջանների ընտրողների թիւը ըստ բնակիչների թւի։ Պալատը 296 ձայնով ընդդէմ 291-ի ընդունում է հիմնական կէտը ըստ ցուցակներում ներմուծված ընտրողների թւի։

ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՏԱՐՕՆԷՆ

Մուշ, 5 Նոյեմ.

Թիւրքահայերուս նորընտիր պատրիարքին մուտքն ի Տարօն շատ շքեղ ու փառաւոր եղաւ... Տարօնի հայութեան կողմէն մանաւանդ ոչ մէկ բան խնայուած էր՝ այդ ընդունելութեան ազգ. արժանապատուութեան լաւագոյն ձև մը տալու։ Տարօնի առաջնորդ Ներսէս եպ. Խարախանեանի հետ զանազան խմբակցութենէ կազմուած պատգամաւորութիւն մը գացեր էր մինչև Բիթլիս։ Անտեղէն մեկնելու հեռագիրը ստացուելուն պէս՝ երկրորդ պատգամաւորութիւն մը աւելի շատուոր, բազմաթիւ անգամներով ու մանաւոր վրաններով և պատրաստութիւններով դիմաւորեց Նորին Ամենապատուութիւնը մէկ օրուան ճանապարհ մինչև Վարդենիս գիւղ։

Յաջորդ օրը նոր ձիաւորներու բազմութիւնը սկսաւ հասնիլ, այնպէս որ Մուշէն 3—4 ժամ հեռի Խասգիւղի մէջ պատրիարքին իջևանած պահուն աւելի քան 500 ձիաւորներ կային, բացի ոտքով գացողներու խումբերամ երկսեռ բազմութիւնը, որ հետ ի հետ կը հասնէր շրջակայ գիւղերէն՝ պատրիարքին աջը համբուրելու, անոր օրհնութիւնը ստանալու և ոևէ խրախուսիչ խօսքը լսելու։

Մուշի կէս ճամբուն վրայ՝ Ծծմակայ քիթին տակ հաստատուած էր կառավարութեան վրանը, ուր կը սպասէին բարձր հիւրին գալստեան տեղւոյս կառավարիչը, զինուորական կոմանդանը իրենց բոլոր պաշտօնեաներով և զինուորական զաբիթներով ու բազմաթիւ Թիւրք երևելիներով։ Երթալով այդ բազմութիւնը այն աստիճան կը խտանար, որ սովորական ճամբանները նեղ կուգային այդքան ձիաւորներ վերցնելու, այնպէս որ շատերը ստիպուած էին կանաչ նոր բուսած արտերը տրորելով անցնիլ...

Քաղաքէն դուրս Ծրտու-քարեր ըսուած տեղն ընդ առաջ ելաւ զինուորական երաժշտախումբը։ Այդտեղ քաղաքապետութիւնը լուսանկարեց Նորին Ամենապատուութիւնն իր շքախմբով և քաղաքային ու զինուորական կցորդներով։ Օսմ. շքեղութիւնը, պատուի շողշողներու շայլումը իր զենիթին էր հասած։ Թիւրքերը ոգևորուած՝ աջ ու ձախ բարձրաձայն կաղաղակէին և խօսքը հայերուս ուղղելով կըսէին՝ «Պատրիարքը մերն է, ձերը ի՞նչ»...

Քաղաք մտնելուն պէս՝ պատրիարքը այդպէս Թափօրով այցելեց նախ կառավարութեան և կոմանդանին, իսկ յետոյ՝ հայ քահանայից և դպրաց դասի առաջնորդութեամբ մտաւ հայոց մայր եկեղեցին ու առաջնորդարան, որ պատշաճապէս կահաւորուած էր պատրիարքին ընդունելութեան համար։ Կողմնակի հիւրերու համար պատրաստուած էին 3—4 հատ մասնաւոր տուներ (Մուշի մէջ եւրոպական մեծով ոևէ հիւրանոց չը կայ)։

Պատրիարքը երեք գիշեր մնաց Մուշի մէջ և շարունակ կրկնակի ճաշկերոյթներով պատուասիրուեցաւ թէ հայերէն և թէ Թիւրքերէն։

Մասնաւորապէս պատրիարքական այս ընդունելութեան համար՝ մշեցիները հանգանակած էին 30 լիրա։

Այդ օրերը գէթ ըստ երևոյթին համերաշխութեան, դրացիասիրութեան օրեր էին։ Նոյն իսկ զարմանքով կը դիտուէր, որ մեր զառամեալ 90-ամեայ Մուֆթին հայասիրութեան դիմակ էր հագած և, հակառակ իր վաղեմի սովորութեան, այլևս Թոյլ չէր տար, որ Թիւրք մը ծեծէր, հայհոյէր հայուն։

Պատրիարքը երրորդ օրը մեկնեցաւ Մուշէն դէպի ս. Կարապետի վանքը՝ նոյն շքեղութեամբ ու փառաւոր երթով։ Կը հաւատեն, որ ս. Կարապետի վանքին ցոյց տուած ընդունելութիւնը աւելի փառաւոր է եղեր. ուսուցիչները Ջանք չեն խնայած վանքին դուրսն ու ներսը, մինչև մայր տաճարը, Թարմ ծաղիկներով ու տերևներով զարդարուած յաղթական կամարներուն տակէն ընդունելու պատրիարքը։

Նորին Ամենապատուութիւնը մէկ գիշեր միայն մնացեր է ս. Կարապետի վանքը և ապա անցեր է Աշտիշատ՝ ս. Սահակ հայրապետին գերեզմանը համբուրելու և վանքին աւերակները դիտելու։ Այդ օր գիշերեր է Աւրան, իսկ յաջորդ օրը Ցարդիերդի վրայէն անցեր է Բուլանըխ։

Ահա այս է նորընտիր պատրիարքին Տարօնէն անցնելու հակիրճ նկարագրութիւնը։

Թէ ինչ հետևանքներ և ինչ ազդեցութիւն ունեցաւ տեղական կառավարութեան և ազգաբնակութեան վրայ Նորին Ամենապատուութեան այս ճամբորդութիւնը, պիտի ջանանք յաջորդիւ անդրադառնալ։ Միայն թէ՝ պատրիարքին Մուշ այցելելն այն անմիջական բարերար ազդեցութիւնն ունեցաւ մեր քաղաքացիներուն վրայ, որ իրենց կողմէն 30 լիրա հանգանակելով ապահովեցին Միացեալի և Ազգանուէր Հայուհեաց նըպաստից խնդիրը և այդ վարժարաններու բացումը գէթ այս տարուան համար։

Ասկէց զատ՝ ի պատիւ պատրիարքին իսկոյն կազմուեցաւ կրթասիրաց ընկերութիւն մը՝ Մուշի վարժարանաց նպաստելու նպատակաւ։ Վերջինս ի պատիւ պատրիարքին ճաշկերոյթ մը տուաւ, որուն միջոցին անդամագրուեցան այդ նորակոչ մարմնին՝ 45-էն աւելի անձեր։ Թախիծ

ԿԻԼԻԿԻԵԱՆ ԽԱԲՐԻԿՆԵՐ

Մերսին, 1 Նոյեմ.

◆ Ազգային վիճակնուս և գործոց մէջ, նախորդ Թղթակցութենէս ի վեր, կարևոր և մանաւանդ մխիթարական փոփոխութիւնք չկան՝ նշանակութեան արժանի։

Ադանայի առաջնորդական խնդիրը ծանօթ է ձեզ։

Շահէ վարդապետ, ձանձրացած՝ իր դէմ մղուած սիստեմատիկ խոչընդոտներէն, հրաժարականը տալով Այնթապ մեկնեցաւ, իր ծննդավայրը, ուրկէ Ամերիկա պիտի մեկնի աստուածաբանութեան հետևելու և անկէ վերադարձին Այնթապի ճեմարանին մէջ պաշտօնավարելու համար։

Գաւառական ժողովը՝ անոր յաջորդին ընտրութեան առթիւ գրեթէ միաձայնութեամբ համաձայնեցաւ Բարգէն եպիսկոպոսին վրայ, որ Գաղատիոյ առաջնորդն է։ Ուրիշ շատ աւելի կարևոր պարագայից մէջ իր անսկզբունք վարուելակերպերովը այլուութիւն պատճառող մեր ազգային կեդրոնական վարչութիւնը «սկզբունքային» հարց մը մէջտեղ դրաւ Ադանայի ընտրութիւնը անվաւեր հռչակելու համար։

Երբեքն ի վեր ազգային իշխանութիւնը սովեցուցած էր մեզի սկզբունքներու համար այդքան յարգանքը։ Կեղծիքն ալ այսքան կրնայ ըլլալ հանրային կեանքին մէջ։ Եթէ այդ սկզբունքն երբեք շեղում մը չի վերցներ, ինչո՞ւ ուրեմն Դիարբեքիրի եպիսկոպոսը Պոլսոյ պատրիարքութեան հրաւիրեցին։ Ինչո՞ւ չսպասեցին, որ նախ առաջնորդը իր Թեմէն հրաժարը տար և Թեմականներէն իր հրաժարը ընդունուէր։

Գաղատիոյ Թեմը չենք ստորնացներ ասով, բայց անուրանալի է, թէ այսօր Կիլիկիոյ սիրտը և, աւաղ, անոր հայութեան այլասերումին ևս կեդրոնը հանդիսացող Ադանան աւելի պէտք ունի ընտրուած առաջնորդին գործակցութեան քան Գաղատիան։

Բայց Բարգէնը հարուածելու համար լոկ առաջ քշուող սկզբունքային քօղին մէջ այսքանը միտք բերողը և սիրտ ընողը ո՞վ։

◆ Հաջըն և Ուլնիա Ադանայէն աւելի բաղդաւոր չեն։

Իր կոչումին, ինչպէս և իրողութեանց խղճալի անծանօթ, էնտրիգան գրիչներէ տարուբեր և մոլորուած արտասահմանեան տեսակ մը մամուլն իր էջերէն մղած անարդար մարտովը Հաջընի առաջնորդական խնդիրը կազմալուծումի մատնած է։

Պահ մը հաւատանք, Թէ Սարաճեան վարդապետը կրնար և պարտաւոր էր ամեն չափ ու սահման անցուցած և հանրային նողկանքին արժանացած կարգ մը, աւաղ, անխիղճ մարդոց գործիք երիտասարդ փախստականներուն օգնել և անոնց կողքն ի վեր կռուիլ, ու չըրաւ, արժանի դառնալով իր Թեմէն զրկումին. ուր է, ահա, ամիսներ անցնելէն վերջ, գտնուեցա՞ւ փնտռուած տիպար եկեղեցական մը, որ Սարաճեանին յաջորդելու ներկայանար։ Արդեօք տեղւոյն ազգ. իշխանութեան դէմ իրենց անգիտակ մարտը շարունակող պարոնները չանդրադարձա՞ն այն բանին թէ, Սարաճեանին գտնուելէն կամ ոչ աւելի, Հաջընի հայութիւնը անհովիւ պահելը հասարակային ոճրագործութիւն մըն էր։ Եթէ այդ է նպատակնին, կը հասկնանք լիովին իրենց ձգտումը։ Թող համարձակ ըսեն։

Հաջընի մէջ ազգային անկերպարանութիւն մը կը տիրէ՝ Փոխանորդ ծերունազարդ քահանան անզօր կը Թուի մէջէն ելլելու՝ որքան ալ բարեացակամութիւն չպակսի իր մէջ։ Կարգ մը փախստականք նորէն իրենց ընթացքովը տեղւոյն կացութիւնը խառնել կը ձգնին... Գերհայրենասիրական զգացումներէ՞ մղուած արդեօք։ Տեղւոյն հայազգի կայմակամն իսկ, լսեցի որ, պժգացած, մտադրած է հրաժարիլ։

Աւազակները իրենց քաղաքացիները կը սպաննեն, տեղի-անտեղի, և այդ արարքները արդարացնող գրողներ և... էջեր իսկ կը գտնուին։ Դպրոցաց բացման տեղն է, Հայուհեաց աշակերտութեան տեղ չկայ, սկսուած վարժարանական շէնքը կիսկատար կը մնայ։ Միացեալի վարժարանաց աշակերտութեան համար աղաները մուտքի տուրք կը սահմանեն, ըստ քմաց։ Եւ արդար տնօրէնութիւն մը, ահա, անարդար գործադրութեամբ մը ժողովրդական դժգոհութեանց դուռ կը բանայ, աշակերտութեան կէսը կը բացակայի դպրոցէն։ Բայց ո՞վ պիտի կրնար ըլլալ, առաջնորդին անձնաւորութենէն աւելի, միջնորդը ժողովրդեան և իր աղաներուն միջև՝ այս և նման խնդրոց կարգադրութեան համար։

Բայց մենք, որ գիտենք լոկ քննադատել և աւրել, չենք տեսներ թէ մեր առաջնորդահալած քաղաքականութեամբն է, որ այս վիճակը պատրաստած ենք։ Ափսո՜ս։

Կըսուի թէ Սարաճեան վարդապետ, եղած թախանձանքներու վրայ, նորէն պիտի գայ եղեր. բարով գայ։

◆ Այնպէս ալ Զէյթուն, ուր թէև անունով կաթողիկոսական փոխանորդ մը կայ։ Հոն ալ փախստականաց խնդիրը կը սպառնայ օր մը ծանր բան մը դառնալ։

Ո՛չինչ պատճառներով փախստական եղած, առանց հետզհետէ եկողներով և զինուորական փախստականներով ստուարացած են, բաժնուած քանի մը խումբերու, ու կամայ ակամայ պատահած դէպքերով, ընդհարումներով և կողոպուտներով աւելի ծանրակշիռ հանգամանք մը կը զգենուն։

Ամառս կոկիսոնցոց հայ կառաւանի մը կողոպուտին պատճառաւ հայ ոստիկանի մը սպանումը գրած էի ձեզ։ Անկէ վերջ կառավարական հետապնդումի մը առթիւ ուրիշ հայ ոստիկան մը ևս կը զարնեն։ Անդին երկու փախստականներու մէջ պատահած կռիւի մը միջամտող ուրիշ հայ մըն ալ կը սպաննուի. ու ահա՝ այս ու նման պատահարներով մ՛ դիրներ են, որ կը դիզուին, և պարզ պատճառէ ծագում առած փախստականութիւնը ծանր կացութեան մը պիտի առաջնորդէ։

Եւ սակայն խելացի և անձնուէր առաջնորդ մը դիւրաւ պիտի կրնար մէկ կողմէն անխոհեմ փախստականները համոզել, որ աղայութիւնը մէկդի դնեն (չեմ գիտեր ինչ բանի մէջ յանձնապաստան՝ անոնք մէկ մէկ ամսականաւոր պաշտօններ կուզեն եղեր, եթէ ճիշդ է լսածս, անձնատուր ըլլալու համար) և միւս կողմէն միջնորդէր կառավարութեան քով այդ լեռնականներուն խնդիրը չմեծցնելու և ներողութեամբ մը մի անգամ ընդմիշտ կարգադրելու այդ վտանգալի կացութիւնը, որ բնական է թէ այս կերպով չպիտի կրնայ շարունակել, ու կը վախցուի թէ օր մը աղէտալի վախճան մը յանգի այդ անհեռատես և միամիտ երիտասարդաց համար, աղէտի մատնելով և երկիրը։

Բայց ասոր համար կանոնաւոր առաջնորդ մը պէտք է։ Եւ ատիկա դիւրաւ գտնուելիք բան մը չէ։ Դիտող

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻՑ

Վան, 10 նոյեմբերի

Հոկտեմբեր 2 Թւականը Վասպուրականի համար մի չարաբաստիկ ու նաև մի բարեբաստիկ Թւական է. այդ օրը վախճանվեց վիճակիս առաջնորդ Յովսէփ արքեպիսկոպոս Սարաճեանը և այդ օրը սպանվեց 7 տարուց ի վեր Վասպուրականը քարուքանդ անող, հարիւրաւոր ընտանիքներ դժբաղդացնող աւազակ Միր-Մհէն։

Կառավարութեան Թուլութիւնից օգուտ քաղելով ու տեսնելով որ իր հօրեղբայր Շաքիրը աւազակութեան ճանապարհով մեծ հարստութիւն ու դիրք է ստացել, նա էլ մի օր սպանեց Փերրադալուն գիւղի քահանայի եղբօրը, ապա նոյն գիւղացի մի ուրիշ հայի և յետոյ ուրիշներին ու դարձաւ փախստական. և որովհետև իբրև փախստական էլ ապրել էր պէտք, ուստի իր շուրջը հաւաքեց իր նման ուրիշ ոճրագործներին կամ ձրիակերների ու սկսեց աւազակային կեանք։ Իբրև աւազակ, նա ո՛չ թէ գործում էր միայն լեռներում ու ճանապարհորդներին էր կողոպտում. ո՛չ. այլ դրա հետ միասին նա յանկարծ երևում էր որևէ գիւղում՝ Նորդուզ, Շատախ ու մասամբ էլ Հայոց-Ձոր գաւառներում ու ազգաբնակութիւնից պահանջում էր փող, ուտեստ և ինչ որ իրան կամ իր մարդկանց պէտք էր. կամ մի թղթի կտորի վրա իր կնիքը զարնելով՝ ուղարկում էր մի որևէ հարուստ մարդու, հայի կամ քիւրդի, ու պահանջում էր նրա ձին, հրացանը կամ որևէ մի այլ բան, որը լսել էր թէ նա ունի. իսկ մերժելն անկարելի էր։ Այս կերպով նա ապրեց 7 տարի իր 30—40 ձիաւոր ընկերներով։ Նա երևի շրջանի ազգաբնակութեան համար մի կօշմար էր դառել. շատ անգամ երթևեկութիւնը կանգ էր առնում իսպառ, կեանքը դադարում էր, որովհետև աւազակը ճանապարհները բռնում և անցուդարձը արգելում էր։

Եօթը տարվայ շրջանում նա հարիւրաւոր մարդ սպանեց և կողոպտեց ու նոյնչափ էլ ընտանիքներ դժբաղդացրեց. նա սպանում էր ոչ թէ մէկ-մէկ, այլ շատ անգամ զանգուածային կոտորած էր անում. այսպէս՝ 1909 թ. ապրիլին նա Կանգվառ գիւղում սպանեց 7 հայերի, որոնք իր ճանգն էին ընկել. միւսներին էլ կը սպանէր, եթէ չը փախչէին ու լեռների անյայտ խոռոչների մէջ ապաստան չը փնտռէին։ Նոյն տարվայ մայիս ամսում իր հօրեղբայր Շաքիրի հետ յարձակվեց Շատախ գաւառի Ծեծանց գիւղի վրա և սպանեց 8 հայերի։ 1911 թւականի օգոստոս ամսում Շաքիրի որդիների հետ յարձակվեց Շատախի Կվերս փոքրիկ գիւղի վրա և սպանեց 6 հայերի. նոյն տարվայ սեպտեմբեր ամսում աւազակ Սայիդ-բէկի հետ միացած Սևան գիւղում դարանի մտնելով, զինուորական մի ջոկատ՝ 11 անձերից բաղկացած՝ բնաջինջ արեց։ Նոյն տարվայ օգոստոս ամսում դարձեալ սպանեց Շատախի երևելիներից Յովհան էֆ. Տէր-Մարգարեանին, իսկ նոյեմբեր ամսում հայ ոստիկան Արշակ էֆէնդիին, երկուսին էլ դաւաճանութեամբ։ Էլ չեմ յիշում շատ ուրիշներին։

Հարցնում էք անշուշտ, թէ ինչ էր անում կառավարութիւնը մի այսպիսի հրէշի հանդէպ. նա ուղարկում էր զօրքերի կամ ոստիկանների ջոկատներ, որոնք աւելի ազգաբնակութեանն էին անհանգստութիւն պատճառում, քան թէ աւազակին. նրանք աւազակի հետ կարծես աչքակապուկ էին խաղում. գնում էին այն գիւղը, որտեղից աւազակը երկու օր առաջ ելել ու անցել էր. գալիս էին հիւսիս, մինչդեռ գիտէին որ նա հարաւումն է. իսկ շատ անգամ էլ, երբ պատահում էին աւազակին, անօգուտ հրացանաձգութիւն էին միայն անում, մինչև որ մութը վրա էր հասնում և աւազակը մթութիւնից օգտվելով հեռանում էր։ Միր-Մհէն մի անգամ պատահում է մի ջոկատ զինուորների, որոնք մի յարդանոցում ապաստանելով՝ պաշտպանվելիս են եղել. աւազակը պաշարում է յարդանոցն ու խոտի դէզերը՝ բոլորած շուրջը՝ կրակ է տալիս, բայց հազիւ գիւղացիները միջնորդելով ազատում են։

Այսպիսի մի հրէշ էր աւազակը, որին այս անգամ կառավարութեան աջողվեց սպանել, ինչպէս որ երեք շաբաթ առաջ սպանել էր նրա հօրեղբօրը՝ Շաքիրին. մի մեծ աջողութիւն էր սա, որի դափնին պատկանում է մեր վալի Թահսին բէյին ու Բաշկալէի միւթեսարրըֆ Ջէվդէթ ու զինուորական գնդապետ Խալիլ բէյերին, որոնք հետապնդում էին աւազակին. այս վերջինը յայտնի Էնվէր-բէյի հօրեղբայրն է։ Այս աջողութիւնը միևնոյն ժամանակ մի ապացոյց է, որ կառավարութիւնը, եթէ ուզէ, կարող է զսպել աւազակներին և երկիրը խաղաղեցնել. իսկ այս վերջին աջողութիւնները մեկնվում են նրանով, որ կառավարութիւնը ուզում է մի գործ ցոյց տալ Եւրոպային իբրև ապացոյց, որ ինքը կարող է բարեկարգել և խաղաղեցնել երկիրը առանց Եւրոպայի օգնութեան։

Հոկտ. 2-ին Շատախ գաւառի Տաքու լեռան վրա յիշեալ զինուորական ջոկատը աջողութեամբ պաշարում է աւազակախմբին, որի հետ երկու ժամ ընդհարում է ունենում. այդ միջոցին աւազակը գլխից ու ճակատից զարնված՝ ընկնում է. ընկնում են նաև նրա խմբից ուրիշներ, իսկ միւսներին աջողվում է փախչել. և այժմ լուր է շրջում, թէ նրանք անձնատուր են եղել։ Աւազակի մարմինը հոկտ. 4-ին քաղաք բերվեց երկու օրվայ հեռաւորութիւնից, ցոյց տրվեց հասարակութեան իբրև մխիթարութիւն. նա բուն իսկ աւազակի մարմինն է. ցոյց տրվեց նաև աւազակի հօրը, Ամար աղային, որ քաղաքիս բանտումն էր ու որդու մահից յետոյ արձակվեց, որ ճանաչեց իր որդուն ու լացեց նրա վրա. ապա լուսանկարը առնվեց ու թաղվեց։ Այս կերպով ահա Վասպուրականը ազատվեց մի ահարկու աւազակից, որ տարիներից ի վեր ահ ու սարսափի մէջ էր պահում երկիրը։

Ինչպէս ասացի, նոյն օրը վախճանվեց վիճակիս առաջնորդ Սարաճեան արքեպիսկոպոսը, որ մի ամսի չափ ծանր հիւանդ էր և արդէն այսպիսի մի տխուր վախճան գուշակվում էր։ Ցուղարկաւորութեան ու թաղման հանդէսը կատարվեց ամսիս 6-ին, կիրակի օրը, Նորաշէն եկեղեցում, ուր ներկայ էին յոգնախուռն բազմութեան հետ վալի Թահսին-բէյ, կոմանդան Ջաբիր փաշա, նաև հիւպատոսներ, կառավարութեան գրեթէ բոլոր պաշտօնեաներն ու օտարազգիներ։

Հանգուցեալ սրբազանը երկու տարուց աւելի է՝ ինչ պաշտօնավարում էր քաղաքում։

Սարաճեան արքեպիսկոպոսը երկար տարիներ պաշտօնավարել էր Ատրպատականում և Ամերիկայում, ունէր շինարար ու նախաձեռնող ոգի. նա Ամերիկայում շինել է երեք եկեղեցիներ, իսկ Վանումն էլ շինեց մի ազգային շուկայ, ծախսելով 15,000 ռուբլուց աւելի մի գումար, որից իբր 1000 ռ. իր անձնականից և որը կազմում էր նրա միակ հարստութիւնը, այնպէս որ այսօր նա վախճանվում է գրեթէ աղքատ։ Բառիս կատարեալ նշանակութեամբ անշահասէր էր. «Ինչի՞ս է պէտք,—ասում էր,—փողը. ես վստահ եմ, որ իմ ազգը ինձ կը պահէ քանի կենդանի եմ, որովհետև ես ծառայում եմ նրան, որովհետև անզաւակ, ծոյլ կեանք չեմ սիրում». և յիրաւի՝ չը նայած իր ծերութեան ու ազգային մարմնին՝ նա շատ գործունեայ կեանք ունէր։ 1901 Թւականին էր կարծեմ, որ նա Խրիմեան կաթողիկոսի կողմից իբրև պատգամաւոր Այվազեան արքեպիսկոպոսի ու Լօրիս-Մելիքեանի հետ եւրոպական արքունիքներն ու դահլիճները շրջեց, նրանց գութը և ուշադրութիւնը հրաւիրելու հայկական տառապանքների վրա, ծախսելով իր ունեցած փողը անխնայ։ Մուրակ

ԴԱՐՁԵԱԼ ԹԻՒՐՔԱՀԱՅԵՐՈՒ ԹԻՒԸ

1882 Թուին բովանդակ Թիւրքիոյ մէջ 2.600,000 հայ բնակիչ կար, հայոց պատրիարքարանի կողմէ յատուկ պատրաստուած վիճակագրութեան համաձայն *)։

Միայն Հայաստանի վեց նահանգներուն մէջ հայոց թիւն էր՝

Վանի	նահանգ	հայ	400,000
Բիթլիսի	»	»	250,000
Տիգրանակերտի	»	»	150,000
Կարնոյ	»	»	280,000
Սեբաստիայի	»	»	280,000
Խարբերդի	»	»	270,000
		Գումար	1.630,000

Վեց նահանգներէն դուրս գտնուող հայոց Թիւն էր՝

Ադանայի	նահանգ	հայ	281,000
Հալէպի	»	»	100,000
Տրապիզոնի	»	»	120,000
Փոքր-Ասիայի նահանգները		»	335,000
Կ. Պոլիս և Եւր. Թիւրքիա		»	195,000
		Գումար	1.030,000

Ծանօթ.—Ընդհանուր կոտորածներէն կարելի է պակսած ըլլայ միայն 6 նահանգներէն 130,000 հոգի։ Բայց հոս յիշուած հայոց Թիւին վրայ պէտք է բարդել նաև Պարսկաստանի, Եգիպտոսի, Ռումանիոյ, Բուլգարիոյ, Աւստրո-Հունգարիոյ և այլ տեղերու հայոց Թիւը շուրջ 150,000.

1878-ին **) Թիւրք կառավարութեան պաշտօնական սալնամէն առանձինն կը նշանակէ միայն Հայաստանի հինգ նահանգներուն մէջ (Վան, Բիթլիս, Տիգրանակերտի հիւսիսային մասը, Կարին և Խարբերդ) ապրող հայերու, Թիւրքերու և քիւրդերու Թիւը հետևեալ կերպով.

Հայ	1.330,000
Թիւրք (Կըզլպաշ և այլ քիւրդեր ալ միասին)	530,000
Քիւրդ	150,000
Գումար	2.010,000

Ծանօթ.—Այս սալնամէի համաձայն՝ բոլոր Թիւրքիոյ մէջ ցրուած քիւրդերու Թիւը 800,000 է։

Իսկ 1889-ին դարձեալ Թիւրք կառավարութեան պաշտօնական ստատիստիկը՝ եւրոպացի աշխարհագրագէտներու, և 1890-ին Մկրտիչ Փորթուգալեանի հրատարակած վերոյիշեալ հինգ նահանգաց վիճակագրութիւնը հետևեալը կը ցուցնէ։

	Հայ	Թիւրք	Քիւրդ	Ասորի
Վանի նահանգ	194,000	15,000	54,000	87,500
Բիթլիսի »	308,000	60,000	53,000	չկայ
Տիգր. հիւս. մաս	120,000	190,000	45,000	»
Կարնոյ »	420,000	120,000	12,000	»
Խարբերդ. »	108,000	43,000	112,000	750
Գումար	1.150,000	410,000	276,000	88,250

Ծանօթ.—Այստեղ հայոց գումարը սալնամէի ցուցուցած Թիւէն 180,000 պակաս է։

Սվազի կուսակալութիւնը չէ յիշուած այս վիճակագրութեանց մէջ։ Միայն ներկայ 1913 տարուայ «Ռայխս-Պօստի» 213-րդ համարին մէջ հրատարակուած («Ազատամարտին» մէջ արտատպուած) վիճակագրութիւնը այսպէս կը ցուցնէ այդ նահանգին բնակչութիւնը. Թիւրք 192,000, հայ՝ 165,000, քիւրդ՝ 10,000 (այս վերջինը չէ յիշուած բնագիրին մէջ, այլ իմ ենթադրութիւնս է)։

Վեց նահանգներուն մէջ՝ ասոնցմէ զատ կան նաև յոյն՝ 42,000, հրէայ և գնչու՝ 7000։

Աւելորդ չենք համարիր այս տարուայ «Ազատամարտի» 1207 Թիւին մէջ երևցած (Թարգմանաբար) դոկտ. Լեփսիուսի յօդուածէն մէջ բերել ըստ Քինէի ամբողջ Թիւրքիոյ մէջ գտնուած հայոց Թիւը, որ կը հաշուէ 1.800,000 (?)։

Դոկտ. Լեփսիուս ցոյց կուտայ նաև Օրմանեան սրբազանի հրատարակած գործին (համարելով զայն հայոց պատրիարքարանի վիճակագրութիւնը) բովանդակ Ասիական Թիւրքիոյ մէջ 1.797,900 հայ, իսկ ամբողջ Թիւրքիոյ մէջ՝ 2.042,400 (?)։

Նաև «Ազատամարտի» նոյն Թիւին մէջ ցոյց կը տրուի «Ռայխս-Պօստի» վերը յիշուած Թիւին մէջ հրատարակուած ցուցակը, այսպէս։

---

*) Ներկայ տարւոյ «Ցուաբեր» Թիւ 84, արտատպուած «Ժամանակէ», որը իր կարգին քաղած է Ալէաթճեան վարդապետին քով գտնուած ցուցակէն։

**) «Իրաւունք» 1901, Թիւ 11, 13, 15.

	Թիւրք	Հայ
Կարնոյ նահանգ . .	240,000	215,000
Վանի » . .	47,000	185,000
Բիթլիսի » . .	40,000	180,000
Խարբերդի » . .	102,000	163,000
Դիարբէքիրի նահ. .	45,000	105,000
Սվասի » . .	192,000	165,000
Գումար	666,000	1.018.000

Ասոնցմէ զատ հոս կը հաշուին քիւրդ՝ 424,000 (?), այլևայլ աղանդներ՝ 88,000, նեստորական՝ 123,000 (կառավարական վիճակագրութենէն 40,000 աւելի), յոյն՝ 42,000, ինչպէս նաև 80—100 հազար գաղթական չէրքէզներ և թիւրքեր, զորս կառավարութիւնը յատուկ դիտաւորութեամբ բերած տեղաւորած է հայաբնակ վայրերու մէջ, վերջին 20 տարուան շրջանին, և որոնք տեղացիի հանգամանքը բնաւ չեն կրնար ունենալ։

Հոս կը տեսնուի, որ հայոց թիւը, յօդուածիս սկիզբը ցոյց տրուած պատրիարքարանի պաշտօնական ցուցակէն 612,000 պակաս է. իսկ հինգ նահանգաց թիւրք, քիւրդ և այլն թիւերը 300,000 աւելի ցոյց տրուած է սալնամէի ցուցուցած թիւէն։

Ինչպէս կը տեսնուի այս ամէն ցուցակներէն, թիւրք պետութեան 1878-ի պաշտօնական սալնամէէն, և հայոց պատրիարքարանի 1889-ի վիճակագրութենէն, նախկիններուն և վերջին երկուքին միջև ամենամեծ տարբերութիւն կայ։ Իրա՞ւ է, որ հայոց թիւը կէս միլիոնէն աւելի պակսած է Հայաստանի մէջ, իսկ ընդհ. Թիւրքիոյ մէջ՝ 800,000 հոգի։ Սա բացարձակապէս սուտ է, անընդունելի և մասնաւոր դիտումներով շինուած։ Իրա՞ւ ամբողջ աշխարհի հայոց թիւը 3·661,000 է եղեր։ Այս որչափ տգիտութիւն. դեռ քանի մը ամիս առաջ ռուս պետութեան հրատարակած վիճակացոյցին մէջ կը տեսնուէր, որ միայն Կովկասի մէջ հայոց թիւը 1.850,000-է աւելի է, դեռ առանց հաշուելու Ռուսիոյ ուրիշ գաւառները գտնուող հայութեան թիւը, որ առնուազն 200,000 պէտք է ըլլայ։ Այնպէս չէ՞։

Պէտք չէ հալած իւղի պէս կուլ տանք, այլ պէտք է բողոքենք ի հարկին այդ բոլոր շինծու գրուածներուն դէմ, պնդենք ձեռքերնիս ունեցած դոկումենտներով, թէ նոյն իսկ այսօր այս վիճակին մէջ՝ հայոց ազգը Հայաստանի վեց նահանգներուն մէջ մեծամասնութիւն է ու կը կազմէ ազգաբնակութեան ոչ թէ 38,9% մասը (ինչպէս ցոյց կուտայ «Ռայխս-Պօստը»), այլ 50%-էն աւելին, համաձայն պետական և ազգային վիճակագրութեանց։ Մեր լաւութիւնով անոնց շինծու գրուածներուն իրաւունք տուած չե՞նք ըլլար, երբ մեր նահատակ ազգին այդ թշնամիները կըսեն, թէ հայերը փոքրամասնութիւն են և չեն կարող իսկ տեղական ինքնավար վարչութիւն մը ունենալ, Ռուսիոյ պաշտպանութեան կամ այլ պետութեանց ուղղակի կոնտրոլին տակ, ինչ որ մեր հայերուս փափագն է, որով միանգամ ընդմիշտ կապահովուի մեր կեանքը, պատիւը և ինչքը, և կազատինք բնաջնջումէ։

Երուանդ Մ. Պօյաճեան

Ալէքսանդրիա

ՖՐԱՆՍԻԱՆ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ

Պարիզ, 2 նոյեմ. (ն. տ.)

Գերմանիայի յարումը Ռուսաստանի մըշակած հայկական բարենորոգումների նախագծին՝ ֆրանսիական քաղաքական շրջանակներին ու մամուլին որոշ զարմանք է պատճառում։

«Մշակի» ընթերցողներին յայտնի է, որ Ֆրանսիան ամենաջերմ պաշտպանն է Թիւրքիայի պետական ամբողջականութեան։ Իր քաղաքական ու ֆինանսական շահերը նրան արդէն ուրիշ դիրք չեն կարող թելադրել։ Ամբողջականութեան կողմնակից լինելով հանդերձ, նա նոյնքան անվերապահ ջատագով է Թիւրքիայի բարեկարգութեանը։ Բայց այդ բարեկարգութեան համար նա հակառակ է այս կամ այն պետութեան մասնակի, անհատական միջամտութեան։ Նա ցանկանում է, որ Թիւրքիայում յուզվող բոլոր խնդիրները միջազգայնանան։ Պատճառը, անշուշտ, հասկանալի է։ Ֆրանսիան այժմ զբաղված լինելով Մարօկկօյում՝ հնարաւորութիւն չունի Ասիական Թիւրքիայում իր քաղաքական ազդեցութեան շրջանակը ընդլայնելու։ Իսկ եւրոպական միւս պետութիւնների, գլխաւորապէս Գերմանիայի քաղաքական նուաճումները՝ միջազգային կացութիւնը կամ՝ աւելի լաւ է ասել՝ եւրոպական հաւասարակշռութիւնը ի վնաս իրան փոխելու բնոյթն ունեն։ Դեռ բալկանեան պատերազմից առաջ, ֆրանսիական դիւանագիտութիւնը առանձին երկիւղով էր նայում գերմանական առաջխաղացութեան վրա սիրիական ծովափերում, Ալէքսանդրէտում և Մերսինում. բալկանեան վերջին անցքերից յետոյ, այդ երկիւղը աւելի լուրջ կերպարանք է ստացել։

Այդ ընդհանուր շարժառիթներից մղված, Ֆրանսիան հայկական հարցի համար ևս միջազգային լուծում է առաջարկում և հակառակ է արտայայտվում այս կամ այն պետութեան մասնաւոր մանդատ տալու սկզբունքին։ Նա առաւել ևս չի ցանկանում, որ Գերմանիան անհատական նախաձեռնութիւն ստանձնի բարենորոգումների գործադրութեան տեսակէտից, գրաւէ հայերի համակրութիւնն ու ջանայ այդպիսով իր քաղաքական դիրքն ամրապնդել Հայաստանում և Միջագետքում։

Ժան Հէրբէթի «Echo de Paris»-ի նոյեմբերի 1-ի համարում հրատարակած յօդուածը («Հայկական բանակցութիւնները»), որ թարգմանաբար ներկայացնում ենք «Մշակի» ընթերցողներին, յատկանշական կերպով ցոյց է տալիս, թէ ինչ է մտածում ֆրանսիական մամուլը Գերմանիայի այդ համաձայնութեան մասին։

⁂

«Մակեդոնիայի գործերը, ինչպէս և ուրիշ շատ գործեր, երկար ժամանակ հայկական տրտունջները արևելեան խնդիրների երկրորդական կարգն են գցել։ Ցայտնի է, սակայն, թէ այդ տրտունջները, որ Բեռլինի վեհաժողովը կարծում էր նկատողութեան առած լինել, բայց որոնց ողբերգական աղաղակը վերարծարծվել է 1895—96 և 1909 թւի ջարդերով, Աբդիւլ Համիդի տիրապետութեան հետ միաժամանակ չանհետացան»։

Այստեղ Ժ. Հէրբէթը մէջ է բերում հայկական մի վիճակագրութիւն 1908—1912-ին Բիթլիսի նահանգում պատահած ոճիրների մասին և շարունակում է.

«Ոչ խաղաղութեան պէտք ունեցող Եւրոպան և ոչ էլ բարգաւաճման կարիք զգացող օսմանեան կայսրութիւնը չեն կարող անվերջ կերպով հանդուրժել այս զարհուրելի ոճիրները։

«Ուստի անցեալ ամառվայ սկզբում, բարենորոգումների երկու նախագծեր հրապարակ եկան. մէկը Թիւրք կառավարութեան գործն էր, իսկ միւսը՝ ռուսական դեսպանատան։

«Թիւրքական նախագիծը՝ հայկական նահանգներում երկրագործական, հանրային աշխատանքների, ոստիկանական և վարչական գործերի խորհրդականների պաշտօնները յանձնում է եւրոպացիներին։ Բ. Դուռը այդ խորհրդականներին ընտրում է մեծ պետութիւնների ներկայացրած ցանկի միջից։ Բացի դրանից, կոնտրոլի պետի անմիջական ազդեցութեան տակ կայ և մի ֆինանսական խորհրդական։ Կազմակերպվելիք ժանդարմերիայի մէջ, իրական հրամանատարները եւրոպացի օֆիցէրները պէտք է լինեն։

«Այդ նախագիծը էական մի թերութիւն ունի. նա չի կազմակերպում եւրոպական կոնտրոլը, մինչդեռ Հայաստանի բոլոր ցաւերի պատճառը հէնց կոնտրոլի բացակայութիւնն է։ Ուստի պետութեանց դեսպանները, որ հայկական հարցը քննելու համար յուլիս ամսին խորհրդակցական նիստ գումարեցին, գլխաւորապէս զբաղվեցին Ռուսաստանի առաջարկած բարենորոգումների ծրագրով»։

Այստեղ Ժ. Հէրբէթը նոյնութեամբ յիշում է ռուսական վերջին նախագծի տրամադրութիւնները, որոնք «Մշակի» մէջ արդէն լոյս են տեսել, և ապա դարձեալ շարունակում է.

«Հասկանալի է, որ Ռուսաստանը իր մօտաւոր հարևանութեան պատճառով շահագրգռված լինի հայկական նահանգների խաղաղացումով և պահանջէ, որ այդ խաղաղացումը ամենաազդու հսկողութեան ենթարկվի։ Ահա հէնց այդ պարագան է, որ Գերմանիան և Աւստրիան չը կարողացան ըմբռնել անցեալ յուլիս ամսի խորհրդակցութիւնների ժամանակ։ Նրանց դեսպանները ռուսական նախագծին մեղադրեցին, որ նա Թիւրքիային ենթարկում է մի շատ խիստ վերահսկողութեան, և այդ առարկութիւնները ջլատեցին եւրոպական կոնցերտի ամբողջ գործունէութիւնը։ Այնպէս որ, օգոստոսի սկիզբներում, Պիշօնը սըր Էդուարդ Գրէյի հետ համաձայնելով՝ աշխատեց փըրկել հայկական բարենորոգումները՝ Ռուսաստանի առաջարկութիւնները Բ. Դռան ծրագրի հետ հաշտեցնելով։

«Բայց այդ ժամանակից ի վեր, արձակուրդի ինքնամփոփման ժամանակ, Բեռլինում յայտնի փոփոխութիւն է կատարվել։

«Արդեօք այդ փոփոխութիւնը Պօղոս-փաշայի միջամտութեա՞մբ եղաւ, որ իր հայ հայրենակիցների դատը պաշտպանելու համար Գերմանիա գնաց, թէ ռուս կառավարութեան տուած բացատրութիւնների շնորհիւ, թէ ինքը Արևելեան Անատոլիայում էական, կարևոր շահեր ունի, որոնք եթէ նոր խռովութիւններով վտանգվեն, պաշտպանելու համար ստիպված է միջամտել։ Ինչ էլ որ լինի, Գերմանիան յարել է ռուսական նախագծին։ Սազօնովը հաստատել է այդ իրողութիւնը վերջերս Բէյման Հօլվէգի հետ խօսելիս, և Կ. Պոլսի գերմանական դեսպան պ. Վանգէնհէյմը այժմ այդ նախագծի պաշտպանութեան համար նոյնքան եռանդ է թափում, որքան սրանից մի քանի ամիս առաջ ընդդէմ պայքարելու համար։

«Գերմանական կառավարութեան հակասական հրահանգներին միշտ փութկոտ հնազանդութիւն ցոյց տալով, պ. Վանգէնհէյմը, ի հարկէ, համակրելի է դառնում իր պաշտօնակիցներին, որոնց բարօն դը Մարշալի անկախ վերաբերմունքն ու zielbewest քաղաքականութիւնը յաճախ ձանձրոյթ էր պատճառում։ Բայց, ճակատագրի մի գերագոյն դաժանութեամբ, դժբաղդ հայերը անշան օգուտ պիտի քաղեն այն աջակցութիւնից, որ նրանք անսպասելի կերպով Բեռլինումն են գտել։ Արդարև, Թիւրք կառավարութիւնը վախենում է, որ գերմանական դեսպանը այդքան բացորոշապէս համերաշխելով ռուսական դեսպանատան հետ և Եւրոպայի միւս ներկայացուցիչներին ստուերի մէջ թողնելով, ցանկանում է Փոքր-Ասիայում՝ Պոտսդամի համաձայնութիւնից մի քանի տարի յետոյ՝ մի այնպիսի առկախ վիճակ ստեղծել, ինչ որ Միւրցշտէգի քաղաքականութիւնը եղաւ Մակեդոնիայում՝ Պետերբուրգի աւստրո-ռուս համաձայնութիւնից մի քանի տարի յետոյ։ Եւ ինչպէս թւում է, մեծ վէզիրը յայտնել է, որ Թիւրքիան չէ կարող ընդունել երկու պետութիւնների այդ նախագիծը, որ իր հողային ամբողջականութեան սկզբունքի հետ անհամաձայն է։ Խորապէս ցաւալի կը լինէր, եթէ հայերի արդար դատը և նոյնիսկ Թիւրքիայի վարկը տուժէին մի այդպիսի թիւրիմացութեան պատճառով։ Դարմանը արդէն շատ պարզ է թւում և դա գտնելու համար միայն մէկ վայրկեանի խորհրդածութիւն է հարկաւոր։

«Որ Ռուսաստանը նախաձեռնութիւնը և, հետևաբար, գլխաւոր պատիւը ունենայ բարենորոգումների մի նախագիծ մշակելու, դա ինքնին շատ բնական է և ամենափոքր կասկածն անգամ չէ կարող զարթեցնել։ Ամենքից աւելի Ռուսաստանն է ցանկանում, որ կրակը իր դրան առջև թաղված չը մնայ, որովհետև եթէ հրդեհը բռնկէ, ինքը առաջինը կը լինի տուժողը։ Բայց որ մի ուրիշ պետութիւն, մանաւանդ այն պետութիւնը, որ Բաղդադի գիծն է շինում, յանկարծ հրապարակ դուրս գայ ռուսական նախաձեռնութիւնը բաժանելու համար, դա արդէն Թիւրքերի դիւրազգածութիւնը միայն կարող է շարժել։ Ի՞նչ պէտք է անել, ուրեմն։ Պէտք է պարզապէս համաձայնութիւն ստեղծել այն հինգ պետութիւնների մէջ, որոնց աշխարհագրական դիրքը, Արևելքի արդի կացութեան մէջ, մասնաւոր իրաւունք չեն տալիս հայկական հարցով զբաղվելու։ Բեռլինի կաբինէտը ցանկանում է, անշուշտ, ցոյց տալ, որ ինքը ռուսական նախագծին յարել է պարզ բարեկամական և մարդկայնական տեսակէտներից առաջնորդվելով։ Նա աւելի մեծ աջողութիւն կունենայ այդ կարծիքը տարածելու, եթէ երբէք իր կարգը ճանաչէ։ Դրանով նա ոչ միայն իր նախապէս պաշտպանած գաղափարներից հրաժարվելու առաւելութիւնը ընծայած կը լինի, այլև իր յարած նախագիծը չը վիժեցնելու արժանիքը կունենայ»։

Ե. Ս.

ԱԼ. ՔԱԼԱՆԹԱՐԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ

ՊՍԱԿԻ ՓՈԽԱՐԷՆ

Ստացանք Ալ. Քալանթարի անուան հիմնվելիք ֆոնդի համար՝ 1) Լուսանկարիչ Տէր-Ղևոնդեանից՝ Ալ. Քալանթարի նկարների վաճառումից գոյացած — 5 ռուբ., 2) Ինժեներ Գ. Կիրակոսեանից — 10 ռուբ.։

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ ՈՒՂՂՎԱԾ «ՄՇԱԿԻ» ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Սուրբ-Խաչ, 29 նոյտ.

Յաւերժ յիշատակ Քալանթարին։

Ծուղուրեան քահանայ

Եալտա, 29 նոյտ.

Հայրենի երկրից հեռու լսելով ժողովրդական մշակ, հասարակական գործիչ և գիւղացիների սիրելի Քալանթարի վաղաժամ մահվան լուրը, մեծ կսկիծով յայտնում ենք մեր ցաւակցութիւնը։

Ուսուցչուհի՝ Մանուկեան, ուսուցիչ Յակոբեան, Շիրվանեան, Սապունջեան, Յովակիմեան, Յովհաննէս Մովսիսեան։

Գրոզնիյ, 29 նոյտ.

Կարդացի սիրելի Քալանթարի մահվան լուրը, յայտնում եմ իմ ցաւակցութիւնը հայ ժողովրդի պայծառ արևի կորուստի առիթով։ Գաբ. Տէր-Գրիգորեան

Պետրոպավլովկա, 29 նոյտ.

Միանալով ձեզ հասած վշտին, սրտանց ցաւում եմ անփոխարինելի Քալանթարի մահվան համար։ Յակոբ Այվազեան

Տաշքէնդ, 29 նոյտ.

Մտքով միանում ենք ձեզ հասած վշտին, յայտնելով մեր անկեղծ ցաւը ողբացած «Մշակին», անմոռանալի խմբագիր, ժողովրդի բարեկամ և ազնիւ գործիչ Քալանթարի մահվան առիթով։

Գաբրիէլեան, Զաքարեան, Խասրովեան, Բեկուճեան, Տիրացեանց, Աղայեանց։

Դուշաք, 29 նոյտ.

Խորապէս վշտացած ենք վաղաժամ անփոխարինելի կորստի համար, որ կրեց հայ գիւղացիութիւնը ի դէմս Քալանթարի՝ Գր. Արծրունու դրօշակակրի։

Գր. Ստեփանեան, Հայկ Մելիքեան

Քութայիս, 28 նոյտ.

Վրացիների մէջ Գրագիտութիւն Տարածող Ընկ. Քութայիսի ճիւղի խորհուրդը իր հերթական նիստում յոտնկայս յարգեց հանգուցեալ յայտնի հասարակական գործիչ և խմբագիր Քալանթարի յիշատակը և որոշեց յայտնել խմբագրութեանդ իր անկեղծ ցաւակցութիւնը։ Զգանովիչ

Մոսկվա, 27 նոյտ.

Ցայտնում եմ իմ խորին ցաւակցութիւնը անմոռանալի Քալանթարի վաղաժամ մահվան համար։ Շովրեան

Սարունչէ, 28 նոյտ.

Եղբ. Միրզօէվների ընկերութեան 50-րդ ուչաստկայի վարպետները, թւով 25 հոգի, յայտնում ենք մեր սրտագին և խոր ցաւակցութիւնը հասարակական գործիչ Քալանթարի անսպասելի մահվան առիթով։

Բենդէրգեազ, 28 նոյտ.

Անվերջ ցաւում եմ, հէնց հիմա իմանալով անփոխարինելի Թանգագին Քալանթարի բոլորովին վաղաժամ մահվան բօթը։

Գերասիմ Լիանօզեան

Սամարղանդ, 28 նոյտ.

Ընդունեցէք խոր ցաւակցութիւնս յարգելի խմբագրի և հասարակական գործիչ Քալանթարի մահվան առիթով։

Մինաս Յարութիւնեան

Սկոբելեվ, 28 նոյտ.

Կարեկցելով ձեր վշտին հայ ժողովրդի գործչի մահվան առիթով, ողբում ենք Քալանթարի վաղաժամ մահը։

Միքայէլեանց

Շուշի, 28 նոյտ.

Խորապէս ցնցված եմ և վշտացած տխուր լուրով։ Սաթենիկ Զաքարեան

Նիժնի-Նովգորոդ, 28 նոյտ.

Ձեզ հետ միասին ողբում եմ Քալանթարի կորուստը։ Կար. Տէր-Զաքարեան

Եւպատորիա, 28 նոյտ.

Յայտնում ենք մեր անկեղծ ցաւակցութիւնը Քալանթարի վաղաժամ մահվան համար, Քալանթարի՝ որը ազնուօրէն կրում էր Արծրունու փառաւոր դրօշակը։

Ուսուցիչ Թումանեան

Ռապիոնա Բեղանեան

(Ուղղված հանգուցեալի ընտանիքին)

Ժընէվ, 26 նոյտ.

Ցնցված թանգագին Ալէքսանդրի մահվան լուրով, չեմ գտնում խօսք՝ արտայայտելու իմ կարեկցութիւնը։ Հեղինէ

Արմավիր, 27 նոյտ.

Բաժանում եմ ձեր ցաւը. Աստուած թող ձեզ մխիթարէ։ Ցէֆլաճեան

(Ուղղված հանգուցեալի ընտանիքին)

Ախալքալաք, 28 նոյտ.

Խորապէս ցաւում եմ ձեր կրած կորուստի առիթով։ Տօրօպատով

(Ուղղված տիկ. Խօջամիրեանին)

Բաթում, 25 նոյտ.

Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկ. Բաթումի ճիւղը ողբում է անխոնջ հասարակական օգտաւէտ գործիչ, խաղաղասէր հրապարակախօս Քալանթարի մահը. խնդրում է ձեզ ներկայացուցիչ լինել թաղմանը և ցաւակցութիւն յայտնել հանգուցեալի ընտանիքին։

Նախագահ՝ աւագ քահ. Մելեան

(Ուղղված Նուշաւան Քալանթարին)

Սև-Քաղաք, 26 նոյտ.

Սև-Քաղաքի դպրոցի ուսուցչական դասը յայտնում է իր անկեղծ ցաւակցութիւնը ձեր կրած ծանր կորուստի համար. Թող Աստուած ձեզ մխիթարէ։

Առաքելեան, Տէր-Կարապետեան ք., կրօնուսոյց Բօրօդին, Վասիլէվա, Գրաբօվա, Մալինովսկայա, Բուրսիկ, Ա. Յարութիւնեանց, Խիմշիէվա։

(Ուղղված հանգուցեալի ընտանիքին)

Մոսկվա, 28 նոյտ.

Խորապէս ցնցված եմ յարգելի Քալանթարի մահով։ Թերթը ընկաւ ձեռքիցս, չէի ուզում հաւատալ. անկեղծ ցաւակցում եմ ձեր վշտին։ Իշխանուհի Թումանեան

(Ուղղված Աւետիս Քալանթարին)

Պետերբուրգ, 25 նոյտ.

Ձեր յարգելի եղբայր Քալանթարի անսպասելի մահով շշմած՝ խնդրում ենք ձեզ և ընտանիքին ընդունել մեր խորին ցաւակցութիւնը և անկեղծ համակրանքը ձեր կրած կորուստի առիթով։

Բալց, Բուդզգէվդէն, Ժուկ, Կօզենկօ, Կօրնեվից, Մարկիանօշէվիչ, Միգիրիւկ, Մօրդբերգ, Պօլօտժիցկի, Պրավօչենսկի, Պլխանով, Սվիրէնկօ, Սմիրնով, Զարնօմսկի։

Քութայիս, 28 նոյտ.

Մարգանեց արդիւնաբերողների համագումարի խորհուրդը և ես անձամբ խնդրում ենք ընդունել մեր սրտագին ցաւակցութիւնը յայտնի հասարակական գործիչ և խմբագիր Քալանթարի կորստեան առիթով։

Զգանովիչ

Ախալքալաք, 25 նոյտ.

Ողբում եմ մահը ազնիւ ժողովրդական գործչի, գիւղացիութեան պաշտպան Քալանթարի, որ բարձր պահեց Արծրունու գաղափարները։

Կարապետ Մաղաքեան

Ախալցխա, 25 նոյտ.

Հայոց Բար. Ընկերութիւնը յայտնում է իր խորին ցաւակցութիւնը [illegible] Քալանթարի վաղաժամ մահվան առիթով։

Նախագահ Ընկ. Այվազեան

Մոսկվա, 28 նոյտ.

Ցնցված անզուգական գործչի, մեր ժողովրդի [illegible] վաղաժամ մահվան [illegible] միանում եմ ձեր վշտի հետ։

[illegible]

Բաքու, 28 նոյտ.

Ցայտնում եմ [illegible] հասարակական գործիչ և հրապարակախօս Քալանթարի վաղաժամ մահվան առիթով։ Խնդրում եմ յայտնել հանգուցեալի ընտանիքին և հարազատներին իմ անկեղծ ցաւակցութիւնը։

Ցաւում եմ [illegible] նրա աճիւնին։

Աւագ. Գէորգ Տէր-Աստուածատրեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՈՆԴ

(Նուէր բոլոր հայերին)

Կարդացի սրտի բերկրութեամբ այն ամէն գեղեցիկ ուղերձները, ճառերը և քարոզները, որոնք տրվել են և կարդացվել մեծ-յօբելեանի առիթով։ Մանաւանդ խորը տպաւորութիւն է թողնում հայր Բենիկի քարոզի վերջին կտորը։

Բայց այդ գեղեցիկ ուղերձները, ճառերը և քարոզները մի մեծ պակասութիւն ունեն։

Ոչ ոք խօսողներից չասաց, թէ անգրագիտութիւնը մեր հայերիս մէջ ինչ տոկոս է կազմում, արդեօք մութ խաւարի գագաթին չե՞նք հասած, արդեօք կուլտուրական ազգ մեզ համարելով չե՞նք հաւատում մի առասպելի. արդեօ՞ք ճշմարիտ չէ Շիրվանզադէի ծաղրը, թէ մենք «միայն մեծ ազգերին նմանվելու յաւակնութիւն ունենք»։ Ամէն մի խօսող պատմում էր սուրբ Մեսրոպի և ս. Սահակի կեանքը, նրանց գործերը, և ոչ ոք չասաց, թէ մեր արդի դրութիւնը առանց Մեսրոպների և Սահակների ինչ է։ Միայն հայր Բենիկը ակնարկեց, և յանկարծ տեսանք, որ «ծալեցին նրա թևերը» թռչունի թևերի նման, որ ընկնում է վայր երկնքից։ Իսկ երկինքը այնչափ կապոյտ է և երկիրը այնչափ մութ և խաւար...Վերջապէս կարծես բոլոր խօսողները ուխտել էին մի բան և իրանց ուխտին միացին հաւատարիմ՝ լռել դպրոցական ֆոնդի մասին։ Եւ զարմանալի, անհաւատալի բան. մեծ յօբելեանի օրը մոռացվեց դպրոցական ֆոնդը... Ես երբէք չեմ հաւատայ, որ խօսողները մոռացել էին դպրոցական ֆոնդը. ոչ. նրանք միայն ուխտել էին լռել, որովհետև խօսել կը նշանակէր դիմել և հանգանակութեան, փչացնել ժողովածների լաւ տրամադրութիւնը. ահա ինչու նրանց թևերը իսկոյն ծալվում էին. և որպէսզի թռչունների նման վայր չը նետվեն, նրանք սաւառնում էին ս. Մեսրոպի և ս. Սահակի կապոյտ երկինքը, որ մեր անցեալն էր, և խուսափում էին ընկնել վայր՝ մեր անխիղճ ներկան...

Ինչ արած, երկինքը այնչափ կապոյտ է և երկիրը այնչափ մութ ու խաւար... [illegible] մի առած կայ, թէ [illegible] տանը չուանի մասին չեն խօսում։ Դպրոցական ֆոնդը մեծ յօբելեանի առիթով [illegible] [illegible]

[illegible]

Սակայն է, հայր Բենիկ, ծալել թևեր և [illegible] [illegible]

Вотанъ

ЛАМПА
СЪ ТЯНУТОЙ
ПРОВОЛОЧНОЙ
НИТЬЮ
ПРОДАЕТСЯ ВСЮДУ.

ՌՈՒՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՇՈՒԿԿԵՐՏ ԵՒ ԿՕՄՊ. Թիֆլիս, Գօլօվինսկի պր. 21.

949. 30—6 (կ. չ.)

րէն և դրանով տալ հաւատ և ոյժ նոր սերունդին, նոր կառողներին. կեանքը կուռ է, լուսաւորութիւնը՝ ճշմարտութիւն։ Ոչինչ, եթէ մենք ևս չը յաղթենք. հաւատանք այդ յաղթութեան և մօտեցնենք նրա գալստեան օրը։ Նա կը գայ միայն դպրոցից և դպրոցով։

Իսկ դպրոցները կը բացվեն և կը պահվեն դպրոցական ֆօնդով։

Դպրոցական ֆօնդով...

Գր. Զալխուշեան

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՐԵՔ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՄԱՀՎԱՆ ՇՈՒՐՋԸ

Շուշի, 28 հոկտ.

Ողբում եմ կորուստը ի դէմս ամենքից յարգված, հազուագիւտ արդիւնաւոր գործիչ կուլտուրական-հասարակական անդաստանի վրա և մարմնացած եռանդ ներկայացնող Կոստանդին Խատիսեանի։ Հանգիստ անխոնջ աշխատաւորի աճիւններին։

Զաւէն վարդապետ

Կէրչ, 29 հոկտ.

Ծխականների ընդհանուր ժողովում յոտընկայս յարգեցինք հասարակական գործիչներ Քալանթարի և Զաւարեանի յիշատակը։

Նախագահ՝ Այդընեան քահանայ
Քարտուղար՝ ուսուցիչ Գասպարեան
Երէցփոխ՝ Կիրլեան

Շամախի, 26 հոկտ.

Ողբում եմ երեք ժողովրդասէրների մահը։ Բարդամեանց

Ա. ՓՈՒՐՑԵԼԱՁԷ

Գօրու գաւառի Աբբօ գիւղում սեփական կալուածքում, նոյեմբերի 4-ին, թոքերի բորբոքումից վախճանվել է վրաց նշանաւոր հասարակական գործիչ և գրող Անտօն Նիկոլայեվիչ Փուրցելաձէն։

Հանգուցեալը ծնվեց 1838 թւին, ուսաւ կադետսկի կորպուսում։

Երկար տարիներ վարեց վրաց ազնուականութեան բանկի վերատեսչի պաշտօնը։ Ունի բազմաթիւ գրուածքներ, թէ արձակ և թէ բանաստեղծութիւնների ձևով, որոնք տպված են վրաց պարբերական հրատարակութիւնների մէջ։ Նրա գրուածքների մէջ կան նաև պատմական ուսումնասիրութիւններ։ Ց. Գ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Նոյեմբերի 3-ին, ինչպէս հեռագրում են Ջուլֆայից, տեղի ունեցաւ Թաւրիզի երկաթուղագծի հանդիսաւոր հիմնադրութիւնը։ Առաջին անգամ Արաքսի կամուրջի վրայով անցաւ գնացքը և կանգ առաւ պարսկական հողի վրա։ Հանդէսին ներկայ էին երկաթուղագիծը կառուցանող ինժենէր Տրէսկինսկին, երկաթուղու ծառայողները և շատ պարսիկներ։ Երկաթուղային շէնութիւնները զարդարված էին դրօշակներով։ «Մշակի» երէկվայ համարում, հեռագրի մէջ, սխալմամբ տպված է թէ տեղի ունեցաւ Արաքսի կամուրջի հիմնադրութիւնը, մինչդեռ կամուրջը վաղուց շինված է։

◆ Այսօր նշանակված է Ռուսաց Աշխարհագրական Ընկերութեան կովկասեան բաժանմունքի կարգադրիչ մասնաժողովի նիստը բաժանմունքի նախագահ ընտրելու համար՝ հրաժարված սենատոր Վատացիի փոխարէն։

◆ Քաղաքագլուխ Ալ. Խատիսեանի առողջական դրութեան մէջ առանձին փոփոխութիւններ չը կան։ Ուռուցքներ նոյնպէս չը կան։

◆ Կիրակի (փոխանակ շաբաթ օրվայ), նոյեմբերի 10-ին, երեկ. ժ. 8-ին, Հասարակական ակումբում Մեֆֆէրտը կը կարդայ դասախօսութիւն «Քաղաքը և դպրոցը» (երեխայի հոգու ողբերգութիւնը) թեմայով։ Ռեֆերատից յետոյ կը լինի զրոյց և երաժշտական բաժին։

◆ Մինչև այժմ էլեկտրաքարշի գծերի վրա երթևեկում էին թւով շատ քիչ վագոններ՝ կենտրոնական կայարանի դինամոմեքենաներից մէկի փչացած լինելու պատճառով։ Այդ հանգամանքից տուժում էր քաղաքի ազգաբնակութիւնը։ Այժմ, շնորհիւ էլեկտրաքարշի վարչութեան ձեռք առած միջոցների, մեքենան վերանորոգվել է և երէկվանից երթևեկում են հարկաւոր թւով վագոններ։

◆ Նոյեմբերի 1-ին հանդէս կերպով տօնվեց Թիֆլիսի առաջին գիմնազիայի դասատու Կ. Նայդէնովի մանկավարժական գործունէութեան 25-ամեակը։

◆ Թիֆլիսի դումայի ձայնաւոր Ա. Բաբեան հարց է յարուցել որոշ տուրք վերցնել քաղաքում նոր շէնքեր կառուցանողներից յօգուտ բժշկական շուտափոյթ ընկերութեան։

◆ Թիֆլիսի բուսաբանական այգին առ 1 նոյեմբերի այցելել են 70,000 հոգի։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂ ԱՐ.

ԲԺԻՇԿ ԼՈՐԻՍ-ՄԵԼԻՔՕՎԸ ՅԱՅՏՆԱԳՈՐԾՈՒՄ Է ԺԱՆՏԱՏԵՆԴԱՅԻՆ ՋԵՐՄԻ ՄԻ ՆՈՐ ԲԱՑԻԼ

Այդ վերնագրի տակ Պարիզի «L'Homme Libre» օրաթերթը Թիֆլիսին քաջածանօթ մեր այդ հայրենակցի գիտնի մասին իր հոկտեմբերի 13-ի (ն. տ.) № 162-ում հետևեալ յօդուածն է գրել.

«Պաստէօրի հիմնարկութեան տարեգրութիւնները նորերս մի վերին աստիճանի հետաքրքրական գիտական զեկուցում էին հրատարակել՝ «Անաէրօբիաները ժանտատենդային ջերմի մէջ (Anaerobies dans la fièvre typhoïde)։ Դոկտոր Լորիս-Մելիքօվը նկարագրում է այդ հիւանդութեան մասին արած երկար հետազօտութիւնների ընթացքում պատահած մի նոր բացիլ։ Բնականաբար մեծ դղրդիւն հանեց այդ զեկուցումը, որովհետև մինչև օրս ոչ ոք չէր կասկածում, թէ ժանտատենդային ջերմի միակ ազդակը Էբէրթի բացիլն էր։ Բժ. Լորիս-Մելիքօվը, ի հաստատութիւն իր դիտողութիւնների, բազմաթիւ փորձերի մի շարք է առաջ բերում. և, առանց Էբէրթի բացիլի ներկայութիւնը ժխտելու, ծանուցանում է իր յայտնագործածի դերը, և որին ինքը Սատելլիտեան բացիլ (bacille Satillite) անունն է տալիս։ Այդ բացիլը, մանաւանդ, առատութեամբ ներկայանում է հիւանդութեան սկզբին, և աւելի յաճախ՝ քան Էբէրթեան բացիլը։ «Ժանտատենդային ջերմի եօթ դէպքում,—գրում է բժիշկը,—եօթն անգամից միայն մէկումն են ջոկել Էբէրթեան բացիլը, և, այդ միևնոյն դէպքերում, ես վեց անգամ սատելլիտեան բացիլն եմ ջոկել (isolé)»։

«Ուրեմն այս վերջինի գործողութիւնը գլխաւոր դերն է կատարում։ Կօբայների (cobayes) վրա կատարած փորձերի ընթացքում, նա առաջ է բերել կենդանու մահը։ Հուսկ, պէտք է աւելացնել, որ բժ. Լորիս-Մելիքօվը վեր է հանել սատելլիտեան բացիլի ներկայութիւնը աղիքի օդից զուրկ մասերում, մինչդեռ Էբէրթեան բացիլի ներկայութիւնը դիտված է ընդհանուր շրջանառութեան (circulation générale) կամ արիւնագործական գործարանների մէջ (organes hématopoïétiques)։

«Սակայն պ. Լորիս-Մելիքօվը, որ մեզ այս տեղեկութիւնները անձամբ տալ բարեհաճեց, աւելացնում է.

«— Ժանդատենդային ջերմի մէջ կարելի է ենթադրել միասին շարժվող երկու որոշ պրօցէսսումներ։ Ինքս հակամէտ եմ այդ բանը կարծելու. բայց դրանք դեռ վարկածներ (hypothèses) են և թէպէտ և իմ փորձերն ինձ թոյլատրում են նրանց ձևակերպութիւնն անելու, ես այդ մասին շարունակելու եմ իմ հետազօտութիւնները։

«Մեծ համեստութեամբ խօսեց մեզ հետ բժ. Լորիս-Մելիքօվ իր յայտնագործութեան մասին։

«— Ես շատ բան եմ պարտական նախորդ աշխատութիւններին, որոնք կատարվել են աղիքի միկրոբային ֆլօրայի շուրջը Պաստէօրի ինստիտուտի մէջ, որին պատկանում եմ և ես։ Իմ ուսուցիչը—պրօֆ. Մէչնիկօվը—և իմ ընկերները չեն զլացել ինձ ոչ իրանց խորհուրդները և ոչ իրանց քաջալերանքը։ Բաղդաւոր եմ այդ բանը հրապարակով յայտնելուս,—ասաց նա մեզ։

«Ապա, երբ մենք խնդրեցինք նրանից ինչ-ինչ տեղեկութիւններ իր առանձնական կեանքի, իր ծրագրերի, իր ընթացիկ աշխատանքների մասին, նա հանդարտիկ ժպտաց ու չը պատասխանեց։ Բայց մենք նրա ընտանի ծանօթների մէկից իմացանք, թէ այդ ուսումնականը որքան ջերմ և նուիրված երկրպագու է գիտութեանը։ Ֆրանսիայի վրա մեծապէս սքանչացողներից մէկը լինելով, բժ. Լորիս-Մելիքօվը երկար ժամանակ և այլ և այլ նուագ ապրել է մեր երկրում։ Քաղաքական ասպարէզն ևս գրաւած է եղել նրան և խոնարհների ընկերական պայմանը բարելաւելու տեսութեամբ ձիգ պայքարներ անելուց յետ է նա իր եռանդը շրջել դէպի մասնագիտօրէն գիտնական աշխատանքը։

«Նա պատկանում է 1905 թւից այս կողմ Պաստէօրի ինստիտուտին, ուր իր աչքի ընկնող աշխատանքները բազմիցս նրա վրա են հրաւիրել գիտական և բժշկական աշխարհի ուշադրութիւնը»։

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Կիէվից հեռագրում են, որ Իւշչինսկիի գործի առիթով որոնվում են իսկական ոճրագործները։

◆ Քիւրդստանի գեներալ-նահանգապետ նշանակվեց Մուզզաֆէր-Էդդին շահի որդին։

◆ Թիւրքիան Իտալիայից ձեռք է բերում երեք զրահանաւ։

◆ Լրացուցիչ տեղեկութիւնների համաձայն, անգլօ-թիւրքական պայմանագրով Կօվէյտը մնում է սուլթանի գերիշխանութեան ներքոյ, միայն ըստանում է լիակատար աւտօնօմիա։ Նաւագնացութիւնը Եփրատի և Տիգրիսի վրա միմիայն անգլիացիների մօնոպոլիան լինելու չէ, այլ գտնվելու է անգլիացիների և թիւրքերի ձեռքում։ Բաղդադ-Բասրա երկաթուղային կառուցման գործին մասնակցելու են և թիւրք դրամատէրերը։ Պայմանագրի բոլոր կէտերը հաւանութիւն են գտել Գերմանիայից։ Պայմանագիրը ստորագրվելու է 1914 թ. սկզբին։

◆ Վիէննայից հեռագրում են, որ Բեռլինում Կոկօվցեվը տեսակցելու է բօլգարական արքայ Ֆէրդինանդի հետ։

◆ Կիէվից հեռագրում են, որ Բէյլիսն ամեն օր սպառնալիքներ է ստանում «սօիւզնիկներից»։

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ОДОЛЬ
Безспорно лучшее полосканіе

Ամենօրեայ [illegible]

(M· 179586/179604)

0—10

„Մշակի“ խմբագրատանը
վաճառվում են
ՀԵՏԵՒԵԱԼ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԵՐԿԵՐԸ.

1) Հասարակութեան նեցուկները, Հ. Իբսէնի, թարգ. Լ. Բարայեանի	50 կ.
2) Նոր կեանքի շեմքում, դրամ. էտիւդ գաւառ. կեանքից, Ա. Ք-ի	40 կ.
3) Նշանվածներ, պիէս 3 գործ., Ալ. Աբէլեանի	60 կ.
4) Ուսանողներ, 3 գործ., Գ. Բաշինջաղեանի	50 կ.
5) Կայէնի ճանկերում, դրամա 5 գործ. Աւ. Առաքելեանի	50 կ.
6) Մազդա, դրամա, 5 գործ. Լևոն Մանուէլեանի	40 կ.

Նրանք, որոնք այս գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն մեզանից փողը կանխիկ վճարելով, կը ստանան 25% զեղչ և ճանապարհածախսը մեզ վրա։ Վերադիր վճարով պահանջողներին կը լինի միմիայն 15%
Հասցէն՝ Ред. газ. „Мшакъ“, Тифлисъ.
(4) 10—10

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
նախկին օրդինատոր Պետերբուրգի սիֆիլ.-վեներ. կլինիկայի։ Ընդունում է հիւանդներին յատկապէս միզասեռային, վեներ., սիֆիլիսային հիւանդութեան. առաւ. ժամը 10—11 և երեկ. ժ. 6—8. Սեմեօնօվսկայա փող., № 8 (Վօրօնցօվի արձանի մօտ)։ Բժշկի բնակարանը Սեմեօնօվսկայա, № 16.
(չ. ու. կ.) 804. 100—17

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Մասնագէտ սիֆիլիս, (Էրլիխի 606 և 914-ով) միզասեռական, վեներական և կաշուի հիւանդութիւնների։ Էլեկտրաբուժութիւն։
Ընդունե- (12½—2 ժ. ցերեկվայ։
լութիւնը (5—7 ժ. երեկոյեան։
ամեն օր (Կանանց համար՝ 2—3 ժ. ցեր.։
Սօլօլակ, Բէյբուտօվսկայա, № 33 (անկիւն Պասկէվիչի փող.), տէլէֆօն 11—75.
(չ. կ.) 785. 100—20

Ա. ԿԻՎԻՏ
Պատրաստում է ՀԱՍՈՒՆՈՒԹԵԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ համար, նոյնպէս և գիմնազիական ու միջնակարգ բոլոր դպրոցները մտնելու, նաև I կարգի կամաւոր զինուոր պատրաստվելու համար։ Ըստ ցանկութեան՝ Ա. Կիվիտ վերցնում է իր վրա ամբողջ պատասխանատուութիւնը քննութիւնների աջողութեան վերաբերմամբ։ Ընդունելութիւնը ցեր. ժամը 12—1-ը և երեկ. ժամը 5—6-ը։ Ելիզավետինսկայա փող. № 142 (անկիւն Պիրոգովի փող.)։
(ա. օ.) 972. 10—6

Въ С.-Петербургѣ вышла изъ печати
ЛЕВОНЪ ГРИГОРЯНЦЪ
ЧАЙКА
(Стихотворенія)
Переводъ съ армянскаго И. Гриневской, Аполлона Коринфскаго, В. Уманова-Каплуновскаго, М. Шагэ—М. Н. Шанъ-Гирей.
Съ портретомъ автора. Цѣна 20 к.
Розничная продажа: въ Тифлисѣ и въ Баку—у мѣстныхъ книготорговцевъ.
Складъ: С.-Петербургъ, 2 П. О. Редакція «Журналъ Лечебникъ».
(կ. չ. ու.) 864. 10—10

КОНТОРА М. А. ГАЖОНІЯ
переведена съ 1-го ноября с. г. въ Пушкинскій пассажъ № 20 и принимаетъ объявленія въ мѣстныя и иногороднія газеты. Условія льготныя и выгодныя. Исключительное представительство нѣсколькихъ редакцій. Тамъ-же и пріемъ рекламъ на Тифлис. трамвай. 2-й адресъ—гост. „Ветцеля“, телеф. 830; кв. Ваке, с. д. телеф. № 925.
(ա.օ.) 988. 5—3

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲԵՐ. ՄԻՆԻՍՏՐՈՒԹԵԱՆ ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ ԳՏՆՎՈՂ
Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
(Թիֆլիս, Միխայլօվսկի պր., № 24) ունկնդիրների խոշոր թիւ լինելու պատճառով, բացվում է զուգընթաց նոր բաժանմունք։ Ունկնդիրների թիւը սահմանափակ է։ Պարապմունքների սկիզբը յունվարի 15-ից։ Խնդիրների ընդունելութիւնը ամեն օր՝ ցերեկվայ ժամը 11½—12-ը և երեկ. ժամը 5—6-ը։
(ու. կ. չ.) 973. 5—3

1865
1870
1882
1896
Ս. ՊԵՏԵՐՍԲՈՒՐԳԻ
ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱԼՕՇՆԵՐ
1860
Т.Р.А.Р.М.
С.ПЕТЕРБУРГЪ
ТРЕУГОЛЬНИКЪ
ТОВАРИЩ. РОСС. АМЕРИКАНСК. РЕЗИН. МАНУФАКТ.
ԹՐԷՈՒԿՕԼՆԻՔ
(ԵՌԱՆԿԻՒՆ)

(կ. չ.) 852.

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ հայոց եկեղեցական-ծխական հոգաբարձութիւնը սրանով յայտարարում է, որ՝ Վրաստանի և Իմերէթի հայոց վիճակային կօնսիստօրիայի 1913 թ. յուլիսի 5-ի № 3167 առաջադրութեան՝ Ախալքալաքի և Ծալկայի գաւառների գործակալութեան իշխանութեան ներքոյ գտնված բոլոր 67 եկեղեցիների
ՄՈՄԱՎԱՃԱՌՈՒԹԻՒՆԸ ՏՐՎՈՒՄ Է ԿԱՊԱԼՈՎ
Աճրդախօսութիւնը լինելու է առաջիկայ դեկտեմբերի 1-ին, առաւօտեան ժամը 10-ին, ծխական դպրոցի հոգաբարձական խորհրդարանում։
Կապալի պայմաններին մանրամասն ծանօթանալու համար ցանկացողները կարող են դիմել Ախալքալաքի ս. Խաչ եկեղեցու երէցփոխ պ. Ց. Մերկելեանին։
Ի. տ. հոգ. նախագահի՝ Ց. Շէխոյեան
Քարտուղար՝ Կ. Ամատունի
(օ. մ.) 987. 3—2

№ 4711
ՖԵՐԴԻՆԱՆԴ
ՄԻՒԼԳԵՆՍ
Պարֆիւմ. № 4711.
ԿԷՕԼՆ—ՌԻԳԱ.
Արկղիկը
30 կ.

(դ. 2,14,27)

ՃԱՐՊԱՅԻՆ ՇՊԱՐԸ
դարձնում է կաշին թաւշի պէս կակուղ ու քնքոյշ և տալիս է նրան թարմ երիտասարդական բնական կոլորիտ։
Անփոխարինելի է որպէս պարահանդիսային ու սալօնային և առհասարակ թէ ցերեկվայ և թէ երեկոյեան շպար։ Կաշին պահպանում է եղանակի ազդեցութիւնից։
Այդ շպարը հիանալի կերպով կպչում է կաշուն։ Նա պատրաստված է բացառապէս ամենաընտիր հիմնական նիւթերից, որոնք կաշու համար միանգամայն անվնասակար են։
Գնորդները, սեփական շահերն ի նկատի ունենալով, պէտք է հետևեն, որպէսզի գնելուց ստանան իսկական № 4711 ՃԱՐՊԱՅԻՆ ՇՊԱՐ։
(M. 358735) 5—2

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный